




ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ «ԱՐԱՐԱՏ» ԵՎ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Արդեն 15 դար է, որ մեր ժողովրդին ուղեկցում է հայ պատմագրության մահապետը՝ ազգային արժանապատվություն, ինքնանաճաճման և ինքնահաստատման ոգի ու եռանդ ներշնչելով սերունդներին: Պատմության բազում հրատարակություններ, աշխարհաբար և օտարալեզու թարգմանություններ, շարականներ, տաղեր, ճառեր ու թղթեր և այլն: Այդ նյութը պետք էր ի մի հավաքել, և կազմվեցին բազմազան մատենագիտական աշխատություններ, մասն մեծանուն հայագետների կողմից:

Այս աշխատանքի նպատակն է ի մի հավաքել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երկու պաշտոնական ամսագրերի խորենացիական նյութը: «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի մեջ կա բավական ծավալուն և տարատեսակ նյութ, որ պետք է համադրել: Կատարվածը թվում է, մեքենական աշխատանք է, բայց և այնպես փորձ է արված որոշ ընդհանրացումներ կատարելու:

Որևէ հեղինակի մատենագիտական նյութը պետք է համակարգվի այնպես, որ հեշտացնի ուսումնասիրողի որոնումն ու կողմնորոշումը: Ժամակարգումը կարող է լինել ժամանակագրական, առարկայական և տեղեկատվական, անկախ նյութի քանակից. մատենագիտությունը պետք է բովանդակի առավելագույն կողմնորոշիչներ:

Այս նպատակից մեկնելով «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի խորենացիական նյութի մասին մեր խոսքը ունի երկու մաս. **Ներածություն** և **Ցանկ**:

Ներածությունը նպատակ չունի վերլուծել ամբողջ նյութը, այլ ընտրանքի սկզբունքով վերարտադրել ամենակարևորը՝ առանց վիճարկելու հե-

դինական մոտեցումը այս կամ այն հարցին, անշուշտ տալով առավելագույն տեղեկությունը յուրաքանչյուրի մասին:

«Արարատ» և «Էջմիածին» ամսագրերը տարբեր են մեր մշակույթի մեջ իրենց վերապահված դերով: Այո, երկուսն էլ որպես Մայր Աթոռի պատմության և մշակույթի խաչուղու վրա, ուստի օրինաչափորեն այդ ամսագրերը լայն տեղ պիտի տալին նաև հայագիտությանը. բանասիրություն, պատմագիտություն, ճարտարապետություն, այլ արվեստներ: Բայց հիմնովին տարբեր են ամսագրերի գործունեության պայմանները, որից և նրանց ընդհանուր բնութագիրը: «Արարատ»-ը իրականացավ հարաբերաբար ազատ մթնոլորտի մեջ և կոչված էր լինելու արևելահայ գիտական մտքի ամբիոն, եթե կուգեք հայագիտության ջահակիրը, դեր, որ ամսագիրը պատվով կատարեց: «Էջմիածին» ամսագիրը ստեղծվեց իբրև կրոնական, մշակութային ու գաղափարական գիշում, ընդամենը հանդուրժվեց, մշտապես գտնվելով պետական սևեռում հսկողության տակ: Ամսագրի ամեն համար անպայմանորեն ենթարկվում էր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի գրաքննության, և գաղափարախոսական տեսանկյունից գիտնականների մեծ մասի համար այն փակ դուռ էր: Չէր խրախուսվում բանասիրական, պատմագիտական հոդվածների հաճախականությունը, քանի որ կային համապատասխան **պետական** գիտական հաստատություններ և պարբերականներ, հայագիտությունը Եկեղեցու գործը չէ: Այս բոլորը ասվեց միայն հասկանալի դարձնելու համար, թե ինչու «Էջմիածին»-ը հայագիտական տեսակետից աղքատ է ընդհանրապես, և ինչու Խորենացու մասին քիչ նյութ կա, մասնավորապես: Հայաստանի մեջ այս նույն տարիներին հսկայական աշխատանքներ կատարվեցին Խորենացու անձի և պատմության մասին, բայց 1879—1911 թթ. (32 տարի) «Արարատ» ամսագրի 60 նյութի դիմաց «Էջմիածին»-ում 1944—1991 թթ. (47 տարի) համար կա ընդամենը 10 նյութ: Վերջին երկու տարին վերացավ գրաքննությունը, և փորձեր են արվում հաղթահարել այս վիճակը:

Երկու ամսագրերի խորենացիական նյութը կարելի է բաժանել այսպես.
ա. բնագիր, բ. ուսումնասիրություն, գ. և այլնայլք:

Ա. ԲՆԱԳՐԻ բաժինը ենթադրում է Խորենացու գրչին պատկանող որևէ ստեղծագործության բնագրային հրապարակում: Երբեմն դրանք կարող են լինել նորահայտ. սրանք կա՛մ պատկանում են Խորենացուն, կա՛մ առնչություն ունեն նրա պատմության հետ: Բնագրեր են բովանդակում մասնագիտական ցանկի 33 նյութից 11-ը, ուղիղ մեկ-երրորդը (1, 4, *7, 8, 10, 11, 12, 13, 14, 25 և 28 նյութերը): Սրանք բաշխվում են այսպես. 1. **բուն բնագրեր**, 2. **բնագրեր համեմատությամբ** և 3. Հայոց պատմությունից կամ շարակնոցներից **քաղվածքներ**, որոնք բնագրագիտական հրապարակման դեր չունեն: Առաջին երկու պարագաներում բնագիրը անպայմանորեն ենթարկվում է գիտական վերլուծության կա՛մ ինքն իր մեջ, կա՛մ համեմատության մեջ:

Թիվ 1-ը բովանդակում է Մովսես Խորենացու և Դավիթ Անհաղթի հարց ու պատասխանները «ըստ երկարքնակների»: Արտատպված է 12-րդ դարի ձեռագրից: Հրատարակիչ Կարապետ Կոստանյանը ձեռագրից առանձնացրել է նաև կենսագրական տեղեկություններ Խորենացու և Անհաղթի մասին:

Թիվ 4-ը բովանդակում է Խորենացու գրչին պատկանող մի գեղեցիկ ներքող՝ նվիրված Հայ Առաքելական Եկեղեցուն: Տողերի սկզբնատառերից գոյանում է «Մովսէսի է սա» բառակապակցությունը:

Թիվ 7-ը «Ի Մովսէսի քերթողահօրն պատմութենէն վասն Կոստանդիանոսի մեծի թագաւորին» բնագիրն է, արտատպված Փարիզի ազգային գրադարանի № 44 ձեռագրից, որ 1194 թ. ճառընտիր է: Հատվածը բովանդակային համեմատության է ենթարկվում Խորենացու պատմության Բ գրքի 83, 87 և 88 (ՁԳ, ՁԷ, ՁԸ) գլուխների հետ: Ըստ հրատարակիչ Կարապետ Տեր-Մկրտչյանի, այս հատվածը ավելի հին է, քան Խորենացու բոլոր ավանդված ձեռագրերը: Նույն ճառընտիրում կա նաև մի այլ նյութ՝ «Պատմութիւն փոփոխման Աստուածածնին և պատկերին իւր Հոգեաց վանքն է, զոր ասացեալ է Մովսէսի Խորենացոյ»:

Կարապետ Տեր-Մկրտչյանը սկզբունքային մոտեցում ունի Խորենացու գործի ուսումնասիրության նկատմամբ: Տեր-Մկրտչյանը քննադատում է Կարիերին, որ նա «Խորենացու գործածած աղբիւրները ամէն տեղ ոչ թէ նոցա յունարէն բնագիրն է համարում, այլ հայերէն թարգմանութիւնը»: Հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ վերոբերյալ հատվածը մաս է կազմում Ագաթանգեղոսի մեզ անձանոթ մի խմբագրության. «Հարկ կը լինէր ընդունել, որ Խորենացու պատմության հեղինակը իւր աչքի առաջ ունէր արդէն պատրաստի գործ»: Տեր-Մկրտչյանը եզրակացնում է. «Ասածներիցս գուցէ կ'երևայ, թէ ես արդէն ընդունել եմ Խորենացու պատմութեան անվանական լինելը և կամենում եմ մի հատուած էլ իմ կողմից տալ: Իմ մտքից հեռու է այդ: Արդարև ես խնդրի վերայ այնպէս չեմ նայում, իբրև թէ Խորենացու վանականութիւնը մեզ համար մի սրբութիւն լինէր, նորան պաշտպանելը մի տեսակ ազգասիրական պարտք, այլ ընդհակառակը կարծում եմ, թէ մենք ի սրտէ շնորհակալ պիտի լինենք այն գիտնականներին, որոնք լրջօրէն և ուղիղ քննադատութեան տեսակէտից այսպիսի հարց բարձրացնելով՝ ճանապարհ են բանում մեր առ այժմ գրեթէ բոլորովին մութ պատմութեան վերայ մի լոյս սփռել» (էջ 151):

Թիվ 8-ը Կարապետ Կոստանյանցի կողմից հրատարակված «Սրբոյն Թեովդորոսի ծնընդեանն և սնընդեանն և վարուց նորա» և «Իսկ երանելոյն Նունէի, վրաց վարդապետութիւն» բնագրերն են 1201 թ. ձեռագիր ճառընտիրից, համեմատությամբ 1453 թ. և 1456 թ. ճառընտիրների հետ: Ուսումնասիրողը համոզում է հայտնում, որ դրանք Խորենացու պատմության մաս են կազմում և նրանից օգտվել են Հովհաննէս Դրասխանակերտցին և Ուխտանէսը:

Թիվ 10-ը վրաց դարձի մասին Խորենացու «Իսկ երանելոյն Նունէի, վրաց վարդապետութիւն» հատվածն է, որ համապատասխանում է Խորենացու պատմության Բ գրքի 86 գլխին: Հրատարակիչ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը գտնում է, որ այս հատվածը Խորենացու նախնական օրինակից է ավանդված. այդ ընհանուր աղբյուրը միաժամանակ աղբյուր է ծառայել նաև Փոքր Սոկրատի (համառոտ) համար, հետևաբար սխալ է Կարիերի կարծիքը այն մասին, թե քանի որ Խորենացին այս բաժինը քաղել է Սոկրատի հայերէն թարգմանությունից, որ կատարվել է 690—92 թթ., ուստի Խորենացու գիրքը ամենավաղ՝ է դարի վերջերից է: Կարապետ վարդապետը ընդունելով հանդերձ Խորենացի-Սոկրատ գուգահեռը, երկուսի աղբյուրը համարում է ընդհանուր, հետևաբար Խորենացու ժամանակը Ե դարից տեղաշարժելու կարիք չկա:

Թիվ 11-ը Խորենացու մեղեդին է ի պատիվ Գրիգոր Լուսավորչին «Ո՛վ արքայակերպ տէր քահանայապետ» սկզբնաբառերով:

Թիվ 12-ը Գրիգոր Խալաթյանցի ուսումնասիրությունն է բնագրերի համեմատությամբ: Խորենացին օգտվել է Գրիգոր Աստվածաբանի գործերից, որոնք թարգմանվել էին «Առաջին թարգմանիչների» կողմից, Ե դարում:

Թիվ 13-ի մեջ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) իր «Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ» հոդվածի մեջ հիմնվելով Սեդրեատրոսի վարքի և Խորենացու բացարձակ նմանության վրա, եզրակացնում է, որ Խորենացին բառացի օգտվել է Սեդրեատրոսի վարքից, և քանի որ հիշատակարաններով ապացուցում է, որ վարքը հունարենի թարգմանվել է 678-ին, ուրեմն 678 թվից առաջ Խորենացու Հայոց Պատմությունը չկար»:

Թիվ 14-ում Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը համեմատում է Սեդրեատրոսի ընդարձակ վարքը, Մեծ Սոկրատը, Փոքր Սոկրատը և Խորենացու պատմությունը եզրակացնելու համար. «Այսօր ինձ համար էլ իրողություն է, որ Մովսես Խորենացու անունով մեր ձեռքը հասած Հայոց պատմությունը այլևս չէ կարող Ե դարու գործ համարվել» (էջ 165): Ըստ հեղինակի ինքը նախապես այն կարծիքին է եղել, որ Խորենացին անկախ է Մեծ և Փոքր կոչված Սոկրատներից, ինչպես նաև Սեդրեատրոսի վարքից, այսինքն Խորենացին դրանցից ոչ մեկից չի օգտվել: Երկրորդ, Խորենացին ինքն է Փոքր Սոկրատի աղբյուրը. Փոքր Սոկրատը համառոտվել է յոթերորդ դարում, ուստի Խորենացուն չի կարելի տանել ութերորդ և իններորդ դարեր: Այս հոդվածով հեղինակը ճշգրտում է իր կարծիքը: Ընդունում է, որ Խորենացին օգտվել է Սեդրեատրոսի 678 թ. հայերեն թարգմանությունից, բայց հերքում է Փոքր Սոկրատից օգտված լինելու Կարիերի և Խալաթյանցի տեսակետները: Խորենացին անձանոթ է եղել Մեծ Սոկրատին:

Ուստի, Խորենացու պատմությունը, ինչպես այն կա այսօր, գրվել է փրկչական 678-ից մինչև յոթերորդ արդի վերջը, մոտավորապես նույն դարի վերջին 20—25 տարիների շրջանում:

Թիվ 25-ում Աշոտ Աբրահամյանը հրապարակել է Խորենացու պատմության մագաղաթյա չորս երկաթագիր պատառիկներ, ուր կան պատմության տարբեր հատվածներ.

ա. Վրաց դարձը Ա. Նունեի ձեռքով (սա հրատարակվել է Մալխասյանի կողմից.

բ. Պատմության երկրորդ գլխի գլխացանկ.

գ. Պատմության երկրորդ գլխի գլխացանկի վերջին մասը.

դ. Ա գրքի երկրորդ գլխի «Յաղագս զանիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց» և չորրորդ գրքի «Յաղագս զի ոչ սակս Ադամայ և այլոց նահապետացն» առաջին մասը.

ե. Ողբի հատվածներից:

Բնագրերը ձեռագրագիտական վերլուծության ենթարկելով հեղինակը որոշում է դրանց դարերը (հնագույնը Ժ դար): Ապա այդ նյութը համեմատելով ԺԴ—ԺԷ դարերի ձեռագրերի հետ մատնանշում է հսկայական փոփոխություններ, ուստի դժվար է որոշել, թե «ինչ աղավաղված վիճակով է հասել մեզ Պատմահոր աշխատությունը, և որքան անիրավացի են այն բանասերները, որոնք այս կամ այն հատվածի հիման վրա փորձում են որոշել նասերները, որոնք այս կամ այն հատվածի հիման վրա փորձում են որոշել Խորենացու ժամանակը»: Կարծում ենք սակայն, որ հենց այդ փոփոխություններն էլ հիմք պիտի ծառայեն ճշմարիտ վերլուծության համար:

Թիվ 28-ում պարզապես ի մի են հավաքված Խորենացու և Բուզանդի տեղեկությունները Հայաստանի հին մայրաքաղաքների մասին (Արմավիր, Արտաշատ, Դվին, Տիգրանակերտ, Վաղարշապատ):

Բ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի խորենացիական նյութի հիմնական մաս են կազմում ուսումնասիրությունները: Սա ինքնին հասկանալի է, որովհետև Խորենացու պատմությունը մեծ նշանակություն ունի ինչպես հայ, այնպես նաև հարևան երկրների ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար՝ իր ընդգրկած ժամանակաշրջանով և բազմերես բովանդակությամբ:

Ուսումնասիրությունները կարելի է խմբավորել մոտավորապես այսպես. նյութեր, որոնք քննում են 1. Խորենացու ժամանակը, 2. Պատմության ժամանակաշրջանը, 3. Աղբյուրները, 4. Բառապաշարը, 5. Գրական վերլուծություն: Սահմանը խմբերի միջև հստակ չէ այն իմաստով, որ նյութը կարող է ընդգրկվել մեկից ավելի խմբի մեջ միաժամանակ:

Ա. Խորենացու ժամանակի հարցը Խորենացու **առեղծվածի** հիմնական տարրն է մի քանի դարերի միջև տատանվող: Հսկայական նյութ է կուտակվել, այս մասին հավանաբար կարելի է ասել, որ ուսումնասիրությունների մեծագույն մասը վերջնական նպատակ ունի լուծել ժամանակի առեղծվածը: Ինչպես տեսանք, բնագրագիտական նյութերը նույնպես այդ նպատակը ունենին: Այստեղ պետք է խնդրո առարկա նյութերի բնութագրերը տալ այս տեսանկյունից: Նախ հաստատենք, որ որպես օրենք այս նյութերը կրում են բանավեճային բնույթ, յուրաքանչյուր հաստատում ունի ուրիշին ժխտելու տարր. օրինակ թիվ 9-ում, ինչպես թիվ 10-ում, Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը բանավիճելով Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանի հետ (տես թիվ 14) հատկապես վրաց դարձի մասին հատվածի կապակցությամբ, մերժում է Խորենացու Փոքր Սոկրատից հայերեն թարգմանությունից օգտվելու վարկածը, Խորենացու և Փոքր Սոկրատի աղբյուրը համարում է ընդհանուր, ուստի և չհիմնավորված և անիմաստ է համարում Խորենացու տեղաշարժը Ե դարից: Այս հարցին նվիրված նյութեր ունի նաև Գալուստ Տեր-Մկրտչյանը և՛ բնագրի համեմատական ուսումնասիրությամբ (տես թիվ 13), և՛ բառապաշարի ուսումնասիրությամբ (տես թիվ 3):

2. Խորենացու պատմության ընդգրկած ժամանակաշրջանը նույնպես ուսումնասիրության նյութ է դարձել, տեղի տալով նաև 4-րդ գրքի գոյության առեղծվածին. այստեղ են քննվում թագավորական ցանկերը, աշխարհագրական և այլ հատուկ աղբյուրները, հին հայոց հեթանոսական կրոնը և այլն:

Մեր մատենագիտական նյութից Խորենացու ժամանակաշրջանի բովանդակային վերլուծություն է պարունակում մանավանդ Մ. Աբեղյանի երկար հոդվածաշարը (թիվ 15): Այստեղ պետք է դնել նաև թիվ **17-ը**, որ հեղինակ Գրիգոր Վանցյանը հիմնվելով Խորենացու հերոսների (Հայկ, Տիգրան և այլք) արտաքին նկարագրության վրա, գրում է, որ Խորենացին տվել է **հայկական ազգային տիպի** բնութագիր, որը ենթադրում է մի **հյուսիսային ժողովրդի տիպ**, ուստի Հայկին Բաբելոնից բերելը կամ Բագրատունիներին հրեական ծագում վերագրելը գիտակցված կեղծիք է. «Մեր վէպի հերոսն Աստուածաշունչի պատմածին հետ կապելու ոչ միայն կարիք, այլև անհրաժեշտ պահանջ կար, քրիստոնեայ հայերի զգացումները շոյելու,

նրանց ծագումը Ս. Գրքի հեղինակաւոր վկայութեամբ հաստատելու և ազգային հին ու կասկածելի աւանդութիւնը սրբագործելու համար» (էջ 190) հավակնում է եզրակացնել հեղինակը:

Թիվ 24-ի մէջ Սիոն վրդ. Տեր-Մանվելյանը զանազան մեջբերումներ կատարելով Խորենացուց, հաստատում է հայ ժողովրդի քաղաքակրթական բարվոք մակարդակը իրավագիտության, մատենագրության, ճարտարապետության և գյուղատնտեսության ասպարեզներում, ուստի Խորենացու ողբի բողոքը միայն «հետևանք է իւր ժամանակի տխուր անցքերի տխրագոյն տպաւորութեան, իսկ այդ տպաւորութիւնները նա անդրադարձել է և դէպի հին ժամանակները»:

Թիվ 26-ում Ռուբեն արքեպս. Դրամբյանը անդրադառնում է մեր մատենագիրների պատմագիտական ճանաչողությանը և հաստատում, որ Խորենացին ուներ իր պատմությունը գրելու հսկայական ներքին մղումը, պատասխանատվություն ժողովրդի ճակատագրի առաջ, սերունդներին իր պատմության փառքով դաստիարակելու նպատակ:

Թիվ 29-ում Գևորգ Աբգարյանը համադրում է Մասիսի անվանադրության ավանդությունները Խորենացու և Անանունի մոտ, իսկ **թիվ 30-ում** Խաչատուր Ամիրջանյանը անդրադառնում է Բել աստծու կերպարին Խորենացու պատմության մէջ և փորձում է ապացուցել հավաստիությունը Ասորեստանի պատմության մասին այլ տվյալներով, մանավանդ բարձր է գնահատվում Խորենացու ժառանգությունը Միջին Արևելքի ժողովուրդների պատմության զանազան երեսների բացահայտման համար, այլ կերպ Խորենացին ստանում է **արևելագիտական արժեք**:

Ուշադրության արժանի է հատկապես **թիվ 33-ը**, 1991 թվին տպված Արտաշես Մաթևոսյանի հոդվածը «Էջմիածին» ամսագրի Թ—Ժ համարներում, որի մասին զեկուցումը արդեն լսեցինք:

3. Անընդհատ արժարժված երրորդ խնդիրը **Խորենացու աղբյուրների հարցն** է: Հայտնի է, որ Խորենացին իր աղբյուրներից շատերին մատնանշում է հականե հանվանե, սակայն ուսումնասիրողները անհրաժեշտաբար պատմությունը ենթարկեցին աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրության, և առաջացան տարաձայնություններ, որովհետև այս կամ այն աղբյուրից օգտվելու փաստը նույնպես ծառայեցվում էր Խորենացու ժամանակի առեղծվածի լուսաբանման:

Վերևում տեսանք արդեն, թե մի քանի սկզբնաղբյուրների հրատարակությունը և համեմատությունը ինչպես կիրառվեց իբրև փաստարկ երբեմն բողոքովին հակադիր եզրակացությանց համար: Ավելացնենք նաև **թիվ 6-ը**, լորովին հակադիր եզրակացությանց համար: Ավելացնենք նաև **թիվ 6-ը**, որ Եղիշե Մադաթյանը քննում է Գ դարի մատենագիր, Կապադովկիայի Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսի հետ առնչված խնդիրը: Փիրմիլիանոսին վերագրվում է Եկեղեցու հալածանքների մի պատմություն, որից և օգտվում է Խորենացին (Բ գիրք, գլ. 75) և քանի որ Փիրմիլիանոսի պատմությունը մինչև Տրդատի ժամանակը Խորենացին «ստույգ է համարում», ուստի երկրորդում է նրան: Սակայն որովհետև 269 թ. մահացած Փիրմիլիանոսը չէր կարող Տրդատի և հաջորդների մասին խոսել, հետևաբար Խորենացու նշած Փիրմիլիանոսը Կեսարացին չէ, այլ Փիրմիլիանոս Լանկտանտիսն է, և Խորենացին օգտվել է նրա «Յաղագս մահու հալածչաց» կամ նույն հեղինակի մի այլ աշխատությունից: Այստեղ կարելի է դնել նաև **թիվ 5-ը**: Փարսամի դան Տեր-Մովսիսյանը քննության է առնում Խորենացու պատմության Բ դան Տեր-Մովսիսյանը քննության է առնում Խորենացու պատմության Բ գրքի 24 գլխի (83) և Սեդեաստրոսի վարքի առնչության հարցը, որի վրա

հիմնված Կարիերը Խորենացու ժամանակը տանում էր 7-րդ դար: Տեր-Մովսիսյանը համաձայն է այդ առնչություններին, սակայն քանի որ, ըստ իրեն, Սեդեասորոսի ընդարձակ թարգմանությունը կատարվել է Ե դարի վերջերին, ուստի Խորենացուն այլ դար տեղափոխելու կարիք չկա, մանավանդ որ այդ հատվածը կարող է նաև ընդմիջարկություն լինել. ընդմիջարկությունն ապացուցող հոդված Ստ. Մալխասյանը արդեն ուներ «Մուրճ» ամսագրում:

4. Հատուկ ուշադրության արժանի է դարձել Խորենացու բառապաշարը՝ բառագիտական, իմաստաբանական, ստուգաբանական, թարգմանական և նաև ժամանակի առեղծվածի լուծման նպատակներով: Մեր նյութերի մեջ ընդարձակ են հատկապես Գալուստ Տեր-Մկրտչյանի, Մանուկ Աբեղյանի և Հակոբ Մանանդյանի հոդվածները:

Թիվ 3-ում մատնանշված են Գալուստ Տեր-Մկրտչյանի հոդվածները «Արարատ» 1890, 91 և 94 թվականների համարներում, ուր հեղինակը վերլուծության է ենթարկում Խորենացու հետ առնչված տարբեր հարցեր, ինչպես նաև ընդհանրապես մեր մատենագրությանը վերաբերող խնդիրներ:

Բառագիտական մասում լեզվական, բանասիրական քննության են ենթարկվում **այրեցողք, մայրաքաղաք, Արարադ/Այրարատ, Տիրանուն, չորեքդիմի, Կունդ Արամազդ, ի դաշտ մեծ, առ ափամբ մօրին մեծի ու գետն մեծ** և այլ բառերն ու բառակապակցությունները «որպես զայք առ քէ» խըրթնաբանությունը: Այլ հոդվածներով ջանում է խմբավորել Խորենացու պատմության մեզ հասած ձեռագրերը:

5. «Արարատ»-ի խորենացիական նյութերից ամենաընդարձակն է Մանուկ Աբեղյանի հոդվածաշարը 1899 և 1990 թվականների գրեթե բոլոր համարներում: Քննության հիմնական տարրը գրական վերլուծությունն է, բայց անշուշտ մանրակրկիտ հետազոտության են ենթարկվում զրույց, վիպասանք, առասպել, երգ, բան, բանք, ասել, թվել, ի թիվ ասել և այլ բազմաթիվ բառեր ու արտահայտություններ:

Գրական վերլուծությունը նպատակ ունի որոշել Խորենացու պատմության և ժողովրդական բանավոր զրույցների, այսինքն բանահյուսության կապը: Այն ընդգրկում է Վահագնի, Հայկի ու Բելի, Արտաշեսի ու Սաթենիկի, Տիգրանի ու Ածդահակի կերպարները, հայոց հին կրոնը, առասպելաբանությունը ընդհանրապես (տես ցանկը, թիվ 15):

Թիվ 27-ում Հակոբ Մանանդյանը հրապարակում է «Նոր դիտողություններ Խորենացու պատմության բառապաշարի մասին»: Հեղինակը վաղուց անտի Խորենացու լեզվում «նկատել էր» հունարան թարգմանությունների բառապաշարի հետքեր ընդհուպ մինչև 8—9-րդ դարեր, որով և անկարելի էր համարում «Խորենացու հունարան լեզուն իջեցնել 5-րդ դար»: Այս երկու հոդվածները նպատակ ունեն հաստատել այդ տեսակետը: Առ այդ նա բերում է 105 բառերի մի ցանկ, որոնց զգալի մասը սակայն կազմված է արդեն 5-րդ դարում մեզ ծանոթ լեզվական կաղապարներով և հունարանությանը առնչվում է միայն այնքանով, որ գործածվել է **նաև** ուշ շրջանի թարգմանությունների մեջ, որոնց մի մասի կողքին հենց հեղինակը ինքը ավելացնում է «հավանորեն որոշ շրջանի բառ է» կամ «կարող է լինել ուշ շրջանի բառ»: Ահա օրինակներ. աթոռակալ, այրասիրտ, անդառնալի, անխոնարհելի, անձնեայ, իսկ օրինակ Խորենացու գործածած **աշխոյժ** բառը օգտագործել է նաև Հովհաննես սարկավագ Իմաստասերը, ահա և Խորենացին անցավ 10-րդ դարի եզրագիծը: Ի մի բան, եթե նույնիսկ առանձին

բառեր ենթարկվում են Մանանդյանի տրամաբանության, ապա մեծավ մասամբ բռնագրոսիկ են. սկզբնապես ելակետ է ընդունված Խորենացու հետին ժամանակի հեղինակ լինելը և հետո կատարվում է հաստատում. «այս բառը չի պատահում հնագույն երկերում»: Հեղինակը ինքն էլ թերահավատ է. «Ես ընդունում եմ, իհարկե, որ ներքև նշանակված բառերի մի մասը կարող են թերևս հին լինել և գտնվել 5-րդ դարի երկերում»:

Գ. Նյութերի երրորդ խումբը համարեցինք **այլևայլք**: Դրանք կա՛մ խմբագրականներում կատարված ակնարկներ են Խորենացու կյանքի ու գործի մասին, կա՛մ գրախոսություններ (թիվ 5, 6, 16, 21, 23), կա՛մ Խորենացու պատմության որևէ հատվածի առնչություն տոների հետ (թիվ 2), կա՛մ այլ մատենագրի գործի հրատարակության առթիվ արված դիտողություն (թիվ 8), կա՛մ Խորենացու աղբյուրներից որևէ մեկի այլաբանական սկզբնաղբյուրի քննության (թիվ 20), կա՛մ բանավեճ (23) և կա՛մ Խորենացուն վերագրվող այլ երկի վերաբերյալ, այլ խոսքով **ոչ պատմութենական** նյութ:

Այլևայլք խմբի նյութերից կուգեինք առանձնացնել. թիվ 16-ում՝ Ստ. Մախաաչյանցի «Սեբեոսի պատմութիւնը և Մովսէս Խորենացի» գրքի մասին գրախոսությունը: Հեղինակը վերաբնակում է Մախաաչյանցի 6 հիմնավորումները՝ ապացուցելու, որ Սեբեոսի Ա և Բ դպրությունները Սեբեոսի գրչին են պատկանում և ոչ թե այլուստ կցված, որտեղ Սեբեոսը օգտվում է նաև Խորենացուց: Սեբեոսի պատմությունն ավարտվել է 661-ից ոչ առաջ և 668-ից ոչ հետո, որից և հետևում է. «Ուրեմն Սեբեոսը, Սեդեքստրոսի և Սոկրատի հայերեն թարգմանութիւններից գոնէ 10—15 տարի առաջ օգտորւել է Մովսէս Խորենացու պատմութիւնից», այսինքն 697-ից առաջ:

Թիվ 22-ում Սիոն վրդ. Տեր-Մանվելյանը գտնում է, որ Մովսէսը **Խորենացի** չէ՝ Տարոն գավառի Վահեվահյան մեհենական բազիլիկի սեփականություն կազմող 12 գյուղերից **Խորնի** գյուղի անունից (տարբերակ Խորոնք), այլ որ այն զարգացմամբ փոփոխված ձևն է «Խորին» (իմաստուն, խորախորհուրդ) ածականի, որ հավանաբար Մովսէսին տվել են հույները, ինչպես Դավթին կոչել են **անհաղթ**: Ըստ հեղինակի Խորենացին Արարատյան դաշտից է և նրա լեզվում կան արարատյան բարբառի հետքեր, օրինակ՝

ոչ գիտելով **զհամ** պատերազմին (ի՞նչ գիտես կովի **համը**

ի մարմանդ այգեաց և բուրաստանեաց (ինչ **մարմանդ** բառ ու բախշեք ունեք

ի բաց քեցել / դեն գցել

զուստն և զհարդն / ուստը-մուստը

ատակել / ատակվել եք

յանկարծէ / ընկածից

ինչպես նաև **գոռալ** բառը:

Թիվ 23-ում Տեր-Մանվելյանին պատասխանում է Բարդուղիմեոս եպս. Գևորգյանը. նախ նրան դատապարտում է իր վաստակը յուրացնելու մեծ. հետո գտնում է, որ **Խորենացին** սերել է **խորին** բառից, բաց ոչ **խորին**՝ իմաստուն բառից, այլ Խորին Հայք (կենտրոնական, դաշտային, ցածրադիր Հայաստան) հասկացությունից:

Թիվ 31-ում Գրիգոր Հակոբյանը վերլուծում է Խորենացուն վերագրվող Ծննդյան, Տյառնընդատաջի և Վերափոխման կանոնների շարականները, վերլուծությունը առավելապես գրական-գեղարվեստական է և ոչ բանավերական-հետազոտական:

Իսկ թիվ 32-ում մեր միջնադարյան երաժշտության գիտականներից Նիկոլոս Թահմիզյանը վեր է հանում Խորենացի շարականագիր-երաժիշտի արժանիքները:

Ուզում ենք ձեր ուշադրությանը հանձնել հատկապես «Արարատ» ամսագրի 1902 թ. հունվարի համարում տպագրված Խրիմյան Հայրիկի 20 էջանոց պոեմը.

Եմ, եմ և ես մի ձայնարկու
Շարունակող ողբերգութեանդ,
Ցորչափ շնչե՛ շունչն ի հոգիս
Մովսիսի ողբացողիդ
Կտակակատար Հայոց Հայրիկ»:

Խրիմյան Հայրիկը պոեմը վերնագրել է «Ողբացող Խորենացին ի Աշտիշատ և Օջական»:

Խորենացին նկարագրվում է որպես Աթենքից եկած մի հարուստ, նոյն գիտությամբ բեռնավորված մավով, որ կանչում է բոլորին գնելու իր գանձերը, բայց «Աւաղ, ոչ ոք և ոչ մի» չգնեց և այդ հարուստը աղքատացավ: Նա մշեցի էր, Խորենի գյուղից և դեգերում էր Հայոց աշխարհում, հանգիստ ու դադար չունեի, «Քրիստոսին էր նմանակ»: Նա իր ազգից մոռացված ազգի գավակ էր, աշխարհ գիտի նրան, իսկ «կուրաց աչքերը» չտեսան այդ գանձը: Հաճախ նա լինում էր Աշտիշատում, իր ուսուցչի՝ Սահակ Պարթևի գերեզմանին և խոսում է ուսուցչի հետ. երեկվա առաջադեմ աշակերտը այսօր որբացած է, վաստակաբեկ ու իր Մայր Հայաստանի համար «խորթ օտարածին»: Հետո գնում էր նաև Օջական, իր մյուս սիրելի ուսուցչի՝ Մեսրոպի գերեզմանին: Ընդվզում է Խորենացու հոգին.

«Գիր չի սիրեր հայոց ազգ,
Անսիրող է իմաստութեան,
Հոգին հպարտ և բարձրայօն»:

Ափսոսում է, որ հսկա գույգ ամուլները հերկեցին հայոց արտը, իսկ արտը այսօր կորդացել է, քանի որ մշակ չկա, ինքը ծիր գերանդավոր մշակ է և չեն թողնում աշխատի. «Ո՛հ, ընդունայն եղև վաստակս»: Խրիմյան Հայրիկը իրեն հատուկ հուզականությամբ ստեղծել է սրտառույչ մի պատկեր, ուր սոված, մրսած ու դողացող Խորենացուն ընդունում է գյուղացի տատիկը, առաջարկում է տաք թոնիր ու հաց: Հետո տատիկը զրուցում է Խորենացու հետ, անբախտ է արդյոք թե սգավոր: Խորենացին պատասխանում է. «Սուգ ունիմ ես մինչև ի մահ, երկու մեռել ունիմ մեծ մեծ»: Հետո պատմում է հայոց նախարարների այցը Սահակ Պարթևին խոստովանելու, որ իրենք թագավորին գցելով

«Վաճառեցինք ազատութիւն,
Ստրկացանք յիմարաբար»,
որով և

«Հրապաշտ ազգին հուր նարակեալ
Վառեց լափեց ողջ Հայոց տուն»:

Կտրուկ է Պարթևի պատասխանը.

«Հիանդորթին մինչ ի մահ է:
Դուք մեռուցիք ազատութիւն
Եւ տի մեռնիք ստրկութեամբ»:

Եվ Սահակ Պարթևը պտույտ է կատարում հայոց պատմութեան մեջ և վճռում.

«Ազատութեան թագ վերացաւ
Եւ Հայաստան ստրկացաւ»:

Ապա Խորենացին բաժանվում է տատիկից, ողբում է իր վիճակը.

«Ասեն՝ Մովսէս հայ ժառանգ չէ,
Արենացի յոյն է նա»:

«Թէ վանականք փակեցին դուռ,
Բաց էր քո դէմ արձակարձակ
Մեր հիւրասէր գիղացոց դուռ»:

Ահա Խորենացու հավերժության գաղտնիքը, ժողովուրդը ընդունեց նրան, և նա անմահ է: Խորենացին ինքը դառնում է այդ ժողովրդի մի մասը, թողնում է գրիչ ու գիրք ու դառնում է ջաղացպան՝ հայոց ազգին հաց պատրաստելու համար: Հետո գտնում է նրան Բագրատունին, խնդրում է գրել հայոց պատմությունը: Մեծանում է Խորենացու հոգին և Քրիստոսի պէս բացականչում է.

«Տէր աղաչեմ, դու ներելով
Մի համարիւր նոցա այն մեղք»:

Հետո Մովսէս Ծերունին Սիմեոն Ծերունու նման խնդրում է Աստծուն հոգին չառնել, մինչև տեսնի «Հայաստանի փրկութեան օր», մի օր էլ գրում է. «Ողբամ զքեզ Հայոց աշխարհ» և Հայոց Հայրիկը ձայնակցում է այդ ողբին, ողբալով հենց իրեն՝ Մովսէս Խորենացուն:

Գողտրիկ, զգացական և անպայմանորեն գեղարվեստական արժանիքներով հարուստ այս պոեմն էլ թող լինի Խորենացու հիշատակի առհավատչյան բոլոր հետագա հայ սերունդների համար:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ

«Արարատ»

1. Սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի եւ Դաւթի հարցմունք ըստ երկաբնակացն (հին ձեռագրից) 1879, էջ 180—189, 210—219

սկ. Որդիք լուսոյ եւ վերին Սիօնի տեսանեմ զձեզ այսօր աստուածային եւ երկնային լուսով փայլեալ...

Նոյն տեղում՝ Կոստանեան Կարապետի ծանօթութիւնը ձեռագրի առթիւ, ըստ որի այն քաղուած է. «Յովհաննու Մայրավանեցոյ, գիրք Արմատ Հաւատոյ» ձեռագրից: Ձեռագիրը 7-րդ դարի չէ, այլ 12-րդ դարի: Ձեռագրում տեղեկութիւններ կան Խորենացու եւ Անյաղթի մասին. նրանք Թէոդորոս կայսեր կողմից նշանակուած են եղել Կարին քաղաքի շինութեան վերակացուներ: Աթէնքում ուսանելու տարիներին նրանք Բիզանդիայի կայսեր հովանաւորութեան տակ են եղել եւ մեծ համարում են ունեցել յոյն մտաւորականութեան մէջ:

2. Մովսիսեան Յուսիկ Եպիսկոպոս

Ա. Լուսաւորչի Վիրապ մտնելու տօնը (Մովսէս Խորենացի, գիրք Բ. գլխ. ՀԲ—ԶԲ եւ Չամչեան, հատոր Ա, գիրք Բ, գլ ԼԳ)

1884, էջ 106—111:

3. Տէր-Մկրտչեան Գալուստ (Միաբան)

Խորենացու պատմութեան ուսումնասիրութիւն—Հայկականք
1890 էջ 567—576, 674—682

1891 էջ 87—106, 147—155, 196—207, 277—284, 384—392, 447—448

1984 էջ 22—26, 55—59, 89—94, 128—130, 154—158, 187—190:

4. Մարգարէից սա սերմանումն 1893, էջ 283—284

Գեղեցիկ ներքող եկեղեցու մասին, որ գտնուել է ձեռագրում՝ Մովսէս Խորենացու պատմութիւնից քաղուած հատուածների շարքում. սկզբնատառերից կազմում է «Մովսէսի է սա»:

Մարգարէից սա սերմանումն ՅԱռաքելոց պտղաբերեալ

Ողորմութեամբ Տեսան շնորհիւ Արժանացեալ Եկեղեցի

Վարդապետաց վարժեալ բանի Մատոռուակեն մատաղ մանկանց

Սրբամաքուր մտաց սնունդ Ի յողղագոյն թելադրութիւն

Էին լրմամբ եւ եռանձնեալ Միշտ ճոխացեալ մանկունք Բամբշի

Սերովբէից արքայն երկրի Մատոռուակեալ ըստ արժանի:

Յիմանալի ներկա լեզուի Առաքելոց հանգանակի:

Ի սղոց սրումն, հրաշալի Գեւ քան զհիւսիսեանն Զաքէի,

Ի փառս Փրկչի Տեսոն Յիսուսի Ամէն ամէն եւ եղեցի

Է տիրապէս գանձ գովելի Որ է պատուեալ յեկեղեցի:

Սիրով սիրոյն հօրն բարի Ի փրկութիւն մարդկան ազգի

Արգասաւոր եւ բաղձալի Ի պէտս հանուրց պտղաբերի

Տէրն է օրհնեալ յամենայնի Եւ յսփտեան, որ եղիցի: 28)

5. Տէր-Մովսիսեան Փարսադան

«Մովսէս Խորենացոյ մէկ նոր աղբիւրը»

(Հայագէտ Կարիէրի աշխատութեան մասին): 1893, էջ 65—76

6. Մաղաթեան Եղիշէ

«Փիրմիլիանոսը Մովսէս Խորենացու պատմութեան մէջ»: 1894, էջ 26—27

7. Տէր-Մկրտչեան Կարապետ

«Ի Մովսէս քերթողահօրն պատմութենէ վասն Կոստանդիանոսի մեծի թագաւորին»: 1894, էջ 357—359

Այ. Այն ժամ եկն Տրդատ ի Հայս եւ առ զթագաւորութիւնն իւր եւ հաստատեցաւ տէրութիւնն...

Արտատպուած է Փարիզի Ազգային մատենադարանի հմր. 44 ձեռագրից, որ ճառընտիր է, գրուած 1194 թ. Գրիգոր Տղա կաթողիկոսի օրով, Տիրիկ բերդի մօտ գտնուող Նեղկուկ գիւղում:

8. Կոստանեանց Կարապետ

«Ի Մովսիսի պատմութենէն»: 1895, էջ 118—121, թիւ 4 յանդիման էջ 11—12

բնագիր. Սրբոյն Թէովդորոսի ծնընդեանն եւ սնընդեանն ի վարուց նորա»

Այ. Ի ժամանակին, յորում Մակեդոնացին Աղեքսանդրոս Փիլիպեանն...

բնագիր. «Մովսէսի Խորենացոյ ի Հայոց Պատմութենէն»

Այ. Իսկ երանելոյն Նունէի, վրաց վարդապետուհոյ, որ էր յընկերաց սրբոյն Հռիփսիմեայ փախստեամբ հասեալ յաշխարհն վրաց...

Արտատպուած 1201 թ. ձեռագիր ճառընտիրից, համեմատուած 1453 եւ 1456 թթ. ճառընտիրների հետ:

9. Տէր-Մկրտչեան Կարապետ վրդ.

«Մի բացատրութիւն», 1895, էջ 221—222

Բանավէն Տէր-Մովսիսեան Մեսրոպ վրդ.ի հետ՝ Խորենացու ժամանակի հարցի շուրջ:

10. Տէր-Մկրտչեան Կարապետ վրդ.

«Վրաց դարձի պատմութիւնն ըստ Մ. Խորենացոյ», 1895, էջ 121—123
«Իսկ երանելոյն Նունէի վրաց վարդապետուհոյ...

Արտատպութիւն ձեռագիր ճառընտիրից. այս աղբիւրը ընդհանուր է Խորենացու եւ Փոքր Սոկրատի համար, ուստի կարիք չկայ Խորենացու ժամանակը տեղաշարժել Ե. դարից:

11. Քարամեան Նիկողայոս

«Մովսէս Խորենացու մեղեդին ի պատիւ Ս. Գրիգոր Լուսաւորչի»:

Ուսումնասիրութիւն եւ բնագիր: 1895, էջ 202—203

բնագիր Մեղեդի սուրբ Լուսաւորչին Մովսէս Քերթողին ոգեալ (տաղ ժխէ)

Այ. Ո՛վ արքայակերպ տէր քահանայապետ...

12. Խալաթեանց Գրիգոր

«Մովսէս Խորենացի եւ իւր աղբիւրները. Գրիգոր Աստուածաբան»

Ուսումնասիրութիւն՝ բնագրերի համեմատութեամբ, 1897, էջ 531—539

Գրիգոր Աստուածաբանի գործերը հայերէն են թարգմանել «Առաջին թարգմանիչները» Ե դարում, որից եւ օգտվել է Խորենացին:

13. Տէր-Մկրտչեան Գալուստ

«Խորենացու ժամանակը որոշելու նոր փորձ»:

Ուսումնասիրութիւն եւ բնագիր: 1897, էջ 422—424

Խորենացին օգտուել է Սեդեքատրոսի 678 թ. հայերէն թարգմանուած վարքից, ուստի 678-ից առաջ Խորենացու «Հայոց Պատմութիւն» չկար:

14. Տէր-Մովսիսեան Մեսրոպ վրդ.

«Սոկրատ պատմագիր եւ Մովսէս Խորենացի»:

Ուսումնասիրութիւն եւ բնագրեր. 1898, էջ 165—173:

Սեդրեատրոսի ընդարձակ վարքը, Մեծ Սոկրատը, Փոքր Սոկրատը եւ Խորենացու պատմութիւնը:

Խորենացու պատմութիւնը գրուած է 676-ից մինչեւ 7-րդ դարի վերջը, մօտաւորապէս նոյն դարի վերջի 20—25 տարիներին շրջանում:

15. Արեղեան Մանուկ

Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու պատմութեան մէջ (քննադատութիւն եւ ուսումածք)

1899

30—37, (ներածութիւն, զրոյց, վէպ, վիպասանք).

81—87 Բան, բանք, երգ բանիցն, երգարանք բանատրք, բանք երգոյն, ի բանսն, որ զնմանէ, բան ի նմանէ:

136—142 Ասել, վիպասանք, երգ վիպասանաց, ի թիւ ասել, թուել, թուելոցն երգք:

200—207 Առասպել, Առասպելի մէջ եղած ճշմարտութիւնը հաստատունը, «ոճով» պատմուածք, թէ ինչպէս է Խորենացին մեկնում առասպելը, թէ ինչու Խորենացին սակաւ է օգտուում առասպելներից:

246—256 Վահագն աստուած, Վահագն արեգակ-հակաճատութիւն Գ. Խալաթեանցի:

304—310 Վահագնի երգ, համեմատական եղանակ, տողային վերլուծութիւն:

360—367 Վահագն, վիշապ եւ ամպրոպային կոիւ, վիշապաքաղ, վիշապ հանել

459—467 Հայկի առասպելը, վիպականութեան խնդիրը, ժողովրդական ստուգաբանութիւն, մակդիրներ

529—535 Հայկի ու Բելի, Սմբատի եւ Հեփթաղի կոիւները (Սեբէոս, Խորենացի, Եղիշէ, Ագաթանգեղոս):

1900

32—39 Հայկի առասպելն էութեամբ վիպական է:

86—92 Կապը աշտարակաշինութեան հետ, առասպելի ծագումը, Անգեղ Տորքի առասպելը:

140—144 Անգեղ տուն եւ Անգեղայ առասպելը:

193—205 Վիպասանք-պատմական-կենցաղական, Արտաշէս եւ Սարենիկ:

264—67 Վիշապագունք, վիշապք:

302—307 Թուելեաց երգեր:

354—361 Արտաւագդի առասպելը, Ածդահակ, քաջք:

415—425 Տիգրան եւ Ածդահակ:

484—495 Հիսունն պիտոյից:

548—556 Երգեր Մեծն Տիգրանի մասին:

623—631 Խորենացու հայեացքը մեր պատմութեան շրջանների վրայ:

16. Մալխասեան Ստեփան

«Սեբէոսի պատմութիւնը եւ Մ. Խորենացի. մատենագրական ուսումնասիրութիւն» Թիֆլիս, 1899, 118 էջ, գրախօսութիւն

1899, էջ 445—449

Սեբէոսի պատմութիւնը աւարտուել է 661-ից ոչ առաջ եւ 668-ից ոչ

յետոյ, Սեբէոսը օգտուել է Խորենացոյց, ուրեմն Խորենացին ատելի վաղ է քան Փոքր Սոկրատի հայերէն թարգմանութիւնը:

17. Վանցեան Գրիգոր

«Դիտողութիւններ Խորենացու մասին: Հին հայոց տիպարն ու ճաշակն ըստ Խորենացու»: 1900, էջ 186—196

Խորենացու տիպերը հիւսիսային ժողովրդի տիպ են, արեւելեան տիպը գիտակցական շփոթում է:

18. Տէր-Մկրտչեան Գալուստի հրատարակութիւնը «Դաւիթ Հարքացոյ (Անյաղթի) փիլիսոփայի որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուած» 1902, էջ 937—973

Էջ 938-ի ծանօթութեան մէջ Տէր-Մկրտչեանը վերահաստատում է իր տեսակէտը այն մասին, որ Խորենացու պատմութիւնը գրուած է 678-ից յետոյ:

19. Խրիմեան Հայրիկ

«Ողբացող Խորենացին ի յԱշտիշատ եւ յՕշական» 1902, էջ 579—599
լայնաշունչ պոէմ նուիրուած Խորենացու կեանքի եւ ճակատագրին:

20. Տէր-Մովսիսեան Մեսրոպ վարդապետ

«Մայրիբասի ասորական ժամանակագրութիւնից արարերէն քաղուածներ» 1903, էջ 235—241

Ն. Մառի համանուն գեկուցման մասին, որ Մառը կարդացել է 1902 թ. Կայսերական Ռուսական հնագիտական ընկերութեան Արեւելեան բաժնում:

21. Տէր-Մովսիսեան Մեսրոպ վրդ.

«Ֆ. Մակլեր. Մովսէս Խորենացին եւ Օգիստ Կարիէրի աշխատութիւնները 1902» գրախօսութիւն—1904, էջ 88—89

22. Տէր-Մանուէլեան Սիօն վրդ. «Մովսէս Խորենացի թէ Խորին», 1911, էջ 232—238

23. Գէորգեան Բարդուղիմէոս եպիսկոպոս

«Իւրացնում են այլոց վաստակը. ակամայ պատասխան. Խորենացուն Խորենացիով պէտք է հասկանալ»: 1911 էջ 319—324, 389—384

Պատասխան Սիօն վրդ. «Մովսէս Խորենացի թէ Խորին» լօղուածին:

24. Տէր-Մանուէլեան Սիօն վրդ.

«Նշմարներ նախնի հայ քաղաքականութեան ըստ Խորինն Մովսէսի» 1911, էջ 466—472

«Էջմիածին»

25. Աբրահամեան Աշոտ

«Խորենացու պատմության մագաղաթյա հնագոյն պատառիկները» ուսումնասիրություն և բնագրեր: 1950 հունվար-փետրվար, էջ 44—57:

Մատենադարան թիւ 9231 ձեռագրի պատառիկ, թիւ 9234 ձեռագրի պահպանակ (ԺԱ դար) եւ թիւ 1221 ձեռագիր (7 դար):

26. Դրամբեան Ռուբէն արքեպս.

«Մեր մատենագիրների պատմագիտական ճանաչողութիւնը» 1950 սեպտ.-հոկտ., էջ 36—40

27. Մանանդեան Հակոբ

«Նոր դիտողութիւններ Խորենացու պատմութեան բառապաշարի մասին» 1955, մայիս, էջ 29-35. հունիս էջ 20—26

105 բառեր Խորենացու մօտ, որոնք քաղուած են Ե. դարից ուշ հեղինակների գործերից, ուրեմն Խորենացու պատմութիւնը չէր կարող Ե. դարում գրուած լինել:

28. «Մատենագիտական վկայություններ մեր հին մայրաքաղաքների մասին» 1968, հոկտ. էջ 15—18

Ուղղակի քաղվածքներ Խորենացու և Բուզանդի պատմություններից:

29. Աբգարյան Գևորգ

«Մասիսի անվանադրության ավանդություններն ըստ Մովսէս Խորենացու և Անանունի» ուսումնասիրություն, 1971 դեկտ. էջ 25—30

30. Ամիրջանյան Խաչատուր

«Հին Բաբելոնական Բել աստծու կերպարը Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» մէջ» ուսումնասիրություն, 1971 հուն.—հուլ. 77—82

31. Հակոբյան Գրիգոր

«Մովսէս Խորենացուն վերագրվող շարականները», 1971, էջ 27—33
վերլուծություն Ծննդյան, Տեառնընդառաջի և վերափոխման կանոնների:

32. Թահմիզյան Նիկողոս

«Մովսէս Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգարվեստը» 1979 հունիս, էջ 44—53

Խորենացին երաժիշտ, շարականագիր

33. Մաթևոսյան Արտաշես

«Մովսէս Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտման թվականը» 1991 սեպտ.—հոկտ. էջ 85—93

Պատմութիւն Հայոց Մեծաց, ավարտված 474 թ.

